ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի /14 ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթ անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթի մասնակցելու համա պետք է ներկայացնել՝

1. դիմում /Ձև1/, մեկ լուսանկար՝ 3x4 չափի ,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

3.անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝/առկայության դեպքում/

5. ինքնակենսագրություն /Ձև 5/

6. այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

10.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտ 17 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. մարտի 19 -ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի մարզի Քանաքեռավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ գ.Քանաքեռավան, 11-րդ փողոց, շենք 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0224-6 -00 - 39 կամ 096 – 199-555 հեռախոսահամարներով: